

1669

408.

Հ. Օ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ



ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆ



ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

361  
—  
2-24



ՏՄ. Յ. ՊՕՂՈՍԵԱՆ

ԲԱՐԻՁ

1927

MAR 2010

361

Z-24

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

Աս

Հ. Օ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳԵՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ

ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻՆ



Բ. 1669

ՏՊ. Յ. ՊՕՂՈՍԵԱՆ

1927

ԲԱՐԻՉ

105 JUN 2013

42899

Հ. Օ. Կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷ

ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆ

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հայաստանի Օգնութեան Կոմիտէն  
—ՀՕԿ—ը Ֆրանսայի մէջ հիմնուած է  
1924ին և յայտարարուած է Ֆրանս. կա-  
ռավարութեան 29 մայիս 1925ին: Յայտա-  
րարութիւնը լոյս տեսած է Ֆրանսական  
Հանրապետութեան պաշտօնաթերթին  
31 Մայիս 1925 թիւին մէջ:

I Ն Պ Ա Տ Ա Կ

1.— Հ. Օ. Կ.-ի ն պ ա տ ա կ ն է՝  
Ա. Օժանդակել Խորհրդային Հայաս-



8966-56

տանի շինարարական աշխատանքին:

Բ. Փոխադարձ բարոյական կապ հաստատել Երկրի և գահուլթահայութեան միջև:

Գ. Նպաստել Հայաստանի տնտեսամշակոյթային զարգացման, քաջալերել արդիւնաբերական և մշակոյթային ձեռնարկները եւ այս նպատակաւ արտասահմանի մէջ հիմնել ընկերութիւններ:

Դ. Աջակցել ներդաղթի գործին:

Ե. Բացառիկ դէպքերու պարագային օգնութեան փութալ երկրի ազգաբնակչութեան:

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

2.— Հ. Օ. Կ.—ը գուտ շինարարական և մշակութային հիմնարկութիւն մ'է և քաղաքական ո և է նպատակ չի հետապնդեր:

Յօդ. 3.— Հ0Կ-ի Ֆրանսայի շրջանը իր գործունէութիւնը կը ներդաշնակէ Երևանի Հ0Կ-ի Գլխաւոր վարչութեան գործունէութեան:

III Հ Ա Ս Ո Յ Թ Ի Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր

Յօդ. 4. Հ0Կ-ի հասոյթի աղբիւրներն են

Ա. Անդամավճար.

Բ. Կենդանութեան եղած զանազան նուիրատուութիւններ.

Գ. Հաւաքոյթներէ և հանդէսներէ դոյացած մուտք.

Դ. Հրատարակութիւններու ձգած հասոյթը կայն:

IV Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

Յօդ. 5.— Հ0Կ-ին կ'անդամակցին ամէն անոնք, որ Խորհրդային Հայաստանի և անոր շինարարութեան ու օգնութեան գործին անկեղծօրէն սատարել կ'ուզեն:

Յօդ. 6.— Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է ունենալ Հ0Կ-ի անդամակցութեան տետրը և ամսավճար մը վճարել, փոխարէն ստանալով համարժէք զրոշմաթուղթ:

Ամէն տարի անդամատերերը կը փոխուին:

Յօդ. 7.— Անդամավճարի նուազագոյն սակը մէկ ֆրանք է:

Յօդ. 8.— Այն անդամը, որ վեց ամիս շարունակաբար իր ամսավճարը չի վճարեր, կը դադրի ՀՕԿ-ի անդամ ըլլալէ:

Յօդ. 9.— Իւրաքանչիւր անդամ պարտաւոր է ժողովրդականացնել ՀՕԿ-ի նպատակները և նոր անդամներ գտնել:

Յօդ. 10.— Քուէարկութեան իրաւունք ունին այն անդամները, որոնք կանոնաւորաբար վճարած են իրենց ամսավճարները և առնուազն ամիս մը առաջ անդամագրուած:

V ԵՆԹԱՄԱՍՆԱՃԻԻՂ ԵՒ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Յօդ. 11.— Միևնոյն քաղաքի մէջ բնակող ՀՕԿ-ի անդամները կը կազմեն տեղական ենթամասնաձիւղ եթէ իրենց թիւը քսանէն վար է, մասնաձիւղ՝ եթէ քսանէն աւելի է:

Բարիզ և Մարսէյլ, Կեդրոնի հաւանութեամբ, կրնան մէկէ աւելի Մասնաճիւղեր ունենալ:

Յօդ. 12.— Ենթամասնաճիւղը կ'ունենայ իր քարտուղարն ու զանձապահը և կը կապուի մերձաւոր մասնաճիւղի մը հետ:

Ենթամասնաճիւղը կնիք գործածելու իրաւունք չունի:

Յօդ. 13.— Մասնաճիւղի վարչութիւնը կ'ընտրուի ընդհանուր անդամական ժողովէն և կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ: Վարչութեան անդամներուն թիւը ճէն մինչև 9 կրնայ ըլլալ:

Վարչութիւնը ինքն իր մէջէն կ'ընտրէ ատենապետ, ատենադպիր և զանձապահ: Վարչութիւնը ամէն շաբաթ ժողով կը գումարէ: Երեք անգամ յաջորդաբար և առանց բանաւոր պատճառի բացակայող անդամը հրաժարուած կը նկատուի:

Վարչութեան պաշտօնավարութեան տեւողութիւնը մէկ տարի է: Անդամները վերընտրելի են: Վարչութեան կազմի ամէն փոփոխութիւն պէտք է ենթարկուի Կեդրոնական Վարչութեան վաւերացումին:

Յօդ. 14.— Մ-ճիւղի վարչութեան պարտականութիւնն է վերին մարմիններու որոշումները գործադրել, հաւաքոյթներ և բանախօսութիւններ սարքել, հասոյթի նոր աղբիւրներ ստեղծել, կանոնաւոր հաշիւ պահել և ամէն երեք ամիսը անգամ մը տեղեկագրել կեդրոն իր բարոյական և նիւթական գործունէութեան մասին:

Իւրաքանչիւր Մ-ճիւղի վարչութեան պարտականութիւնն է ուժ տալ ՀՕԿ-ի բրօքականտի գործին, Մ-ճիւղին հովանաւորութեան տակ ստեղծելով մշակութային, մարզական և լսարան-ընթերցարանական միութիւններ:

Յօդ. 15.— Վարչութեան հրաւէրով անուագն երեք ամիսը անգամ մը ընդհանուր անդամական ժողով կը գումարուի: Իւրաքանչիւր անդամական ժողով կ'ունենայ իր առանձին դիւանը եւ կը զբաղի վարչութեան կողմէ դրուած օրակարգերով:

Բացառիկ ընդհանուր անդամական

ժողով կը գումարուի եթէ անդամներու մէկ երրորդը գրաւոր փափաք յայտնէ:

Յօդ. 16.— Ընդհ. անդամական ժողովը օրինաւոր կը համարուի եթէ անդամներու կէսէն աւելին անձամբ ներկայ է: Եթէ առաջին Ընդհ. անդամական ժողովը մեծամասնութիւն չգոյացնէ, 7—15 օրուայ մէջ հրաւիրուած երկրորդ Ընդհ. անդամական ժողովը օրինաւոր կը նկատուի, ինչ որ ալ ըլլայ ներկաներու թիւը, պայմանաւ որ նոյն օրակարգը ունենայ:

Բոլոր որոշումները կը տրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդ.— 17.— Յրանսայի Մ-ճիւղերը չորս շրջանի կը բաժնուին, կեդրոն ունենալով Բարիզ, Լիօն, Վալանս եւ Մարսէլ: Իւրաքանչիւր շրջանի պատկանող Մ-ճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչները կրնան այդ կեդրոններուն մէջ, միջմասնաճիւղային խորհրդակցական ժողովներ գումարել, Կեդրոնական Վարչութեան անդամի մը նախագահութեան տակ:

3 օ դ. 18.— Միջմասնաճիւղերու ներկայացուցչական ժողովներու դերն է Մ-ճիւղերու աշխատանքը նւիրաշնակել, հաւաքական ժողովներ սարքել, շրջանի պրոպականտը գորացնել եւ նոր Մասնաճիւղեր հիմնել հասարակաց ճիւղերով:

3 օ դ. 19.— Միջմասնաճիւղային այս խորհրդակցական ժողովներու որոշումները կը գործադրուին Կեդրոնական Վարչութեան վաւերացումէն յետոյ:

VI ՊՍՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

3 օ դ. 20.— Պատգամաւորական ժողովը կը գումարուի տարին անգամ մը Կեդրոնական Վարչութեան հրաւերով: Արտակարգ Պատգ. ժողով կը գումարուի երբ Կեդր. Վարչութիւնը հարկ տեսնէ և կամ Մ-ճիւղերու կէսէն աւելին պահանջէ:

3 օ դ. 21.— Առնուազն ամիս մը առաջ Կեդր. վարչութիւնը պարտաւոր է պատգամաւորական ժողովին տեղը, թուականը եւ օրակարգը շրջաբերականով

հաղորդել Մ-ճիւղերուն:

3 օ դ. 22.— Իւրաքանչիւր Մ-ճիւղ մէկ ձայնի իրաւունք ունի, 100—200 անգամ ունեցող մասնաճիւղ մը՝ երկու, յետոյ իւրաքանչիւր 100 անգամի համար մէկ ձայն աւելի:

Պատգամաւորները կ'ընտրուին Ընդհ. անդամական ժողովէն: Արտակարգ պարագային պատգամաւոր կ'ընտրուի տեղական պայմաններու համաձայն. Կեդր. վարչութեան հաւանութիւնը ստացուելէ յետոյ: Իւրաքանչիւր պատգամաւոր սկզբունքով մէկ ձայն միայն կրնայ ներկայացնել: Բացառիկ պարագաներուն եւ հեռաւոր վայրերու համար Կեդր. վարչութեան հաւանութեամբ կրնայ միեւնոյն Մ-ճիւղի մինչեւ երեք ձայները ներկայացնել:

3 օ դ. 23.— Պատգ. ժողովը օրինաւոր կը համարուի երբ Մ-ճիւղերու եւ ձայներու կէսէն աւելին ներկայացուած է:

3 օ դ. 24.— Պատգ. ժողովը

ա) կը լսէ Կեդր. վարչութեան բարոյական եւ նիւթական հաշուետուութիւնը

եւ իր գնահատանքը կ'ընէ,

բ) Երեք հոգիէ բաղկացած վերստուգիչ մարմին մը կ'ընտրէ, որ կը քննէ Կեդր. Վարչութեան նիւթական հաշուետուութիւնը,

գ) Կը գծէ պիւտճէն, և կուտայ նոր հրահանգներ,

դ) Եթէ հարկ տեսնուի, փոփոխութեան կ'ենթարկէ կազմական կանոնագրի վերաբարեալ յօդուածները,

ե) Կ'ընտրէ նոր Կեդր. վարչութիւնը:

VII ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յ օ դ. 25.— Ֆրանսայի շրջանի Հօկ.ի վերին գործադիր մարմինը Կեդր. Վարչութիւնն է, որուն կեդրոնը Բարիզ կը գտնուի:

Յ օ դ. 26.— Հօկ.ի Ֆրանսայի և իր գաղութի բոլոր Մ-ճիւղերը ուղղակիօրէն կապուած են Կեդր. Վարչութեան եւ անոր ենթակայ:

Յ օ դ. 27.— Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ 13 անդամներէ և 7 թեկնածուներէ:

Յ օ դ. 28.— Կեդր. Վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ իր դիւանը՝ Ա. և Բ. Ատենապետ, Ա. և Բ. Քարտուղար և Գանձապահ:

Յ օ դ. 29.— Կեդր. Վարչութեան անդամներուն հը կրնայ գաւառ ընակիլ և շրջաններու մէջ գործել իբրեւ Կեդրոնի անդամ: Անոնց համար պարտաւորիչ չէ Կեդր. Վարչութեան նիստերուն ներկայ գտնուիլ, այլ մշտական յարաբերութեան մէջ կ'ըլլան դիւանին հետ:

Կեդր. վարչութեան նիստը օրինաւոր կը համարուի երբ Բարիզ գտնուող անդամներու մեծամասնութիւնը ներկայ է: Չորս ամիսը անգամ մը գաւառ ընակող անդամներու հետ Կեդր. վարչութիւնը լիակատար նիստ կը գումարէ:

Յ օ դ. 30.— Կեդր. վարչութեան պարտականութիւնն է ղեկավարել Հօկ.ի ընդհանուր գործը. անոր նպատակը իրականացնելու համար հարկ եղած աշխատանքը ի գործ դնել, հսկել Մ-ճիւղերու գործունէութեան վրայ, հրահանգներ ու ցուցմունքներ տալ, վաւերացնել Մ-ճիւ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0215819

42 899

---

Imp. 33, Rue Pixérécourt, PARIS 20<sup>e</sup>